

ՄԵՐ ՀԱՅՐԵՐՈՒՆ ԽՐԱՏՆԵՐԸ

ՄԻՂԱՏԵՔ, ՈՐՊԵՍՁԻ ՉՂԱՏՈՒԹ

Եղբայրներ մի՛ բամբասե՛ք գիրար: Ան, որ իր եղբայրը կը բամբասէ կամ իր եղբայրը կը դատէ, օրէնքը բամբասած եւ դատած կ'ըլլայ, ապա երբ օրէնքը դատես, ալ դուն օրէնքը կատարող չես, հապա՛ դատաւոր: Միայն մէկ Օրէնադիր եւ դատաւոր կայ, որ կրնայ փրկել եւ կորսնցնել: Դուն ո՞վ ես, որ ընկերդ կը դատես (Յակոբ. 3. 17-4.12):

Եղբայրներ, սքափիմք մեր խելագարութենէն եւ ոտէ մէկը անիրաւաբար չդատենք, ոչ ալ իրաւունքով՝ անողորմաբար, որպէսզի չըլլայ թէ անողորմութիւն դատաստանը ընդունինք:

Եթէ մեղաւոր ու վիրաւոր է ան, որ կը դատես, անով իսկ ողորմութեանդ եւ արցունքներդ արժանի է եւ ոչ թէ դատապարտութեանդ: Կարեկից եւ ցաւակից պէտք է ըլլալ այնպիսիին եւ ոչ թէ բամբասող: Իսկ եթէ արդար եւ անարատ է դատածդ, պէտք է աւելի վախճալ եւ դողալ անկէ, որովհետեւ ան դատաստանէ եւ բամբասանքէ ազատ ըլլալով, նախանձի կամ չար աչքի պատճառաւ գայն իբրեւ յանցաւոր կը դատես եւ ի լուր ամէնուն գայն իբրեւ մեղաւոր կը բամբասես եւ սուտով կ'արատաւորես անոր արդար ու բարի անունը:

Ձե՞ս գիտեր այն, թէ ինչ չափով որ անոր յանցանքները դատես, նոյն չափով դուն ինքդ պիտի չափուիս Դատաւորէն (Տե՛ս Մատթէոս 7.1), որովհետեւ այն մեղքերը, որոնցմով արդար ստութեամբ կը բամբասես, ըլլայ շնութեան կամ այլ ծանր ու թեթեւ խօսքերով, անոր դատաստանը դուն ինքդ պիտի կրես:

ԾԻՍԱԿԱՆ ԳԻՏԵԼԻՔՆԵՐ

Ի՞նչ կը խորհրդանշէ Ողջոյնը պատարագի ընթացքին

Ողջոյնը առաջին հերթին խաղաղութեան եւ սիրոյ խորհրդանիշ մըն է, որով հաւատացեալները կը միանան Քրիստոսի, նաեւ իրարու, հետեւելով Պօղոս Առաքեալի պատուէրին, որ կ'ըսէ. «Սուրբ համբոյրով ողջոյն տուէ՛ք իրարու» (Բ. Կորնթացիս 13.12):

Ողջոյնին իմաստը հաւատացեալներու միութիւնն է, եղբայրական հարազատ սիրով եւ ոգիով, առանց մէկը միւսէն խոռոված ըլլալու: Անոնք կ'ողջագուրուին իրարու հետ՝ որպէս բարեկամներ՝ առանց բարկութեան, նեղութեան, տարակարծութեան կամ ատելութեան: Այս բոլորը, Քրիստոսի պատուէրին համաձայն՝ երբ ան կը թելադրէ. «Եթէ գոհարանին վրայ, ընծադ Աստուծոյ մատուցանելու ատեն յիշես՝ որ եղբայրդ վշտացած է քեզմէ, ձգէ՛ ընծադ գոհարանին առջեւ, գնա՛, նախ հաշտուէ՛ եղբորդ հետ եւ ապա, եկու՛ր եւ ընծադ Աստուծոյ մատուցանէ՛»:

ԱՌԱԿ. ԳԼՈՒԽ ԺԵ. 10-12

Բարի մարդուն խրատը ընդունելի է հարազատներուն համար, իսկ անոնք որ յանդիմանութեան չեն հանդուրժեր՝ վարկաբեկիչ վախճան պիտի ունենան:

Երբ մահն ու կորուստը յայտնի են Տիբրոջ, որքան եւս առաւել՝ մարդոց սրտերը: Անուղղայ մարդը չի սիրեր զինք յանդիմանողը եւ չի հաղորդակցիր գիտակից մարդուն հետ:



ԱԶԳԱՅԻՆ ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ԼԻՔԱՆԱՆԻ



ԲՈՒ ԽՕՍԲԻ ԽՄ ՌՅԲԵՐՈՒՄ ԵՐԱԳ Է ՈՒ ԽՄ ԸԱԽԴՆԵՐՈՒՄ ԼՈՅՍ (Ս, 119.105)

ԺԶ. ՏԱՐԻ **ԿԻՐԱԿԻ, 8 ՅՈՒՆԻՍԻԱՐ 2023** ԹԻՒ 2

ԿԻՐԱԿԻ ՕՐԵՐՈՒ ԱՍՏՈՒԾԱՆՉՉԱԿԱՆ ԸՆԹԵՐՅՈՒՄՆԵՐ

Եբր. 1.1-12.Ստթ 2.13-23

ԱԿԵՏԱՐԱՆ ԸՍՏ ՄԱՏԹԷՈՍ 2.13-23

Երբ մոզերը Բեթղեհէմէն մեկնեցան, Տիրոջ հրեշտակը Յովսէփի երեւցաւ երագի մը մէջ եւ ըսաւ.- Ե՛լ, առ մանուկն ու մայրը եւ փախի՛ր Եգիպտոս: Հոն մնա՛ մինչեւ որ ըսեմ քեզի, որովհետեւ Հերովդէս կը փնտռէ մանուկը՝ զայն սպաննելու համար:

Յովսէփ արթնցաւ, գիշերով առաւ մանուկն ու անոր մայրը եւ գնաց Եգիպտոս, ուր մնաց մինչեւ Հերովդէսի մահը: Այս ձեւով իրականացաւ Տիրոջ խօսքը, Ովսիա մարգարէի բերնով ըսուած. «Եգիպտոսէն կանչեցի իմ որդիս»:

Իսկ Հերովդէս, երբ տեսաւ որ մոզերը զինք խաղի բերին, սաստիկ զայրացաւ եւ մարդիկ որկեց, որպէսզի սպաննեն Բեթղեհէմի մէջ եւ անոր շրջակայքը գտնուող բոլոր երեխաները, որոնք երկու տարեկան եւ կամ ատելի փոքր էին, նկատի առնելով Յիսուսի ծննդեան ժամանակը, որ ստուգած էր մոզերէն: Այսպէս իրականացաւ այն՝ ինչ որ Տէրը Երեմիա մարգարէին բերնով կ'ըսէ.- «Գոյժ մը լսուեցաւ Ռամայի մէջ, ողբ, հեծեծանք եւ լացուկոծ դառնագին. Ռաբէլ իր զաւակներուն համար կու լար եւ մխիթարուիլ չէր ուզեր, քանի այլեւս անոնք չկային»:

Հերովդէսի մահէն ետք, ահա Տիրոջ հրեշտակը Եգիպտոսի մէջ Յովսէփի երեւցաւ երագի մը մէջ եւ ըսաւ.- Ե՛լ, ա՛ռ մանուկն ու մայրը եւ վերադարձի՛ր Իսրայէլի երկիրը, որովհետեւ մանուկը սպաննել ուզողները մեռան:

Յովսէփ ելաւ, առաւ մանուկն ու անոր մայրը եւ վերադարձաւ Իսրայէլի երկիրը: Սակայն, երբ լսեց որ Աղքեղայտը թագաւորած է Հրէաստանի վրայ՝ իր հօրը Հերովդէսի տեղ, հոն երթալու վախցաւ: Փոխարէնը, երագի մը մէջ իրեն հրամայուածին համաձայն՝ գնաց Գալիլեայի կողմերը եւ եկաւ բնակեցաւ Նազարէթ քաղաքին մէջ, որպէսզի իրականանայ ինչ, որ Տէրը կ'ըսէ մարգարէներուն միջոցաւ, թէ Նազովրեցի պիտի կոչուի:

ՍՈՒՐԲԵՐ ԵՒ ՏՕՆԵՐ

ՄԵՌԵՆԻՍԻ ԵՒ ԳԵՐԵՉՄԱՆՕՐՀՆԻՔԻ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԵՂԵՑԻԿ ԱՒԱՆ ԴՈՒԹԻՒՆԸ

Հայ Եկեղեցւոյ օրացոյցին համաձայն Հինգ Տաղաւարներու յաջորդող օրը կը կոչուի Մեռելոց, այսինքն՝ մեր հանգուցեալներու յիշատակը հաւաքական կերպով յարգելու սահմանուած յատուկ օրեր: Տարուան 365 օրերու հեւքոտ ընթացքը մեր աչքին առջեւ ունենալով, երբ յաճախ ապրողներս ալ զիրար ալ կը մոռնանք, կը տեսնենք, որ մեր Հայրերու կարգադրութիւնը որքան իմաստուն է: Արդարեւ, այդ օր մեզմէ բաժնուած հարազատները կը դառնան մեր կեանքին առանցքը, կը յիշենք զիրենք, կ'այցելենք անոնց մասունքներու երկրաւոր վերջին տաղաւարը, հաւատքի ու աղօթքի ճամբով կը վերամիանանք իրարու, եւ կը բաժնենք կանխող մեծ տօներու խորհուրդն ու օրհնութիւնները: *Իրարու հետ բաժնել, միասին տօնել եւ ոչ թէ միայն սգալ անոնց կորուստը:* Ահա այս է հիմնականին մէջ Մեռելոցի Օրուան հասկացողութիւնը:

Հայ Եկեղեցւոյ աստուածաբանութեան համաձայն Եկեղեցւոյ մաս կը կազմեն այս աշխարհի մէջ ապրող եւ այս կեանքէն մեկնած հաւատացեալները, ծանօթ՝ Զինուորեալ Եկեղեցի եւ Յաղթական Եկեղեցի անունով: Մենք եւ հանգուցեալները կը կազմենք մէկ ամբողջութիւն եւ կ'ապրինք հոգեւոր նոյն շրջանակին մէջ: Մենք կը հաւատանք, որ մեր հանգուցեալ սիրելիներու հոգիները կը շարունակեն ապրիլ մեր հետ՝ սպասելով մեր Տիրոջ երկրորդ Գալուստին: Յիսուս ըսաւ. «Ով որ իմ խօսքս գործադրէ՝ յաւիտեան պիտի չմեռնի» (Յով. 8.51): Մեր սիրելիները ապրեցան այս կեանքի մէջ հաւատալով Քրիստոսի եւ մեկնեցան այս աշխարհէն: Մենք կը յիշենք գանոնք ամէն օր, կը քայլենք անոնց ճամբաներէն, անոնց անունները կու տանք մեր գաւակներուն հաւատալով, որ անոնք չեն կորսուիր մոռացութեան ու անէութեան մէջ, այլ՝ մեր միջեւ եղող հոգեւոր կամուրջը անխափան կը մնայ: Մեռելոցի օրերուն մեր ննջեցեալներու գերեզմաններուն վրայ կ'աղօթենք: Սա գեղեցիկ աւանդութիւն մըն է, որ իր օգուտը ունի թէ՛ մեզի եւ թէ՛ հանգուցեալին համար:

Մեր օգուտը այն է, որ մեզ կը գորացնէ անդենական կեանքի մեր հաւատքին մէջ՝ ի Քրիստոս ննջած մեր սիրելիներուն սէրը կենդանի պահելով մեր մէջ: Իսկ հանգուցեալի պարագային ճիշդ է, որ այս արարողութեամբ անոնք անմիջապէս դըրախտ չեն մտներ, բայց կը հաւատանք սրտի խորերէն առ Աստուած ուղղուած Աղօթքի ու աղաչանքի գորութեան, որմէ կ'օգտուին ոչ միայն ողջերը, այլեւ մեռածները: Ամէն անոնք, որոնք կը տարակուսին այս ճշմարտութեան, կրնան բանալ Աստուածաշունչ մատեանը եւ այդտեղ կարգալ, որ ողջերու սրտագինս աղաչանքներուն ընդառաջելով Բարերարն Աստուած ոչ միայն միօրեայ մեռած Նայինի պատանին ու Յայրոսի դուստրը կեանքի կոչեց, այլ՝ չորս օրուան թաղուած Ղազարոսին կեանք պարգեւեց: Միթէ Բարեգութն Աստուած, որ մօր մը, հօր մը եւ քոյրերու խնդրանքները աննկատ չթողուց մեռելները յարուցանելով, արդեօք պիտի անտեսէ ննջեցեալներու մեղքերու թողութեան համար մեր աղաչանքները: Ահա, թէ ինչու համար առհասարակ հանգուցեալներու համար եղած աղօթքները, Հոգեհանգիստ՝ թէ Գերեզմանօրհնէք, երբ կը կատարենք սրտաբեկ աղաչանքով, զիտակից հաւատքով եւ բարեյոյս ակնկալութեամբ, խորքին մէջ Աստուծոյ խնամքին կը յանձնենք անոնց հոգիները, վստահելով, որ Իր անհուն սիրով Ան լաւագոյնս կը տնօրինէ: Այս հաւատքով, սիրելի հայրդի, երբ Մեռելոցի օրը մտն փառես հարազատներու շիրմին վրայ, գայն փառէ խնդրելով, որ Երկնաւոր Հայր իր ողորմութեամբ վերաբերի անոնց հետ: Ս. Ներսէս Շնորհալիի խօսքերով Տէրը «ջնջէ» անոնց «յանցանքներու ձեռագիրը, եւ գրէ անոնց անունները կեանքի գիրքին մէջ», իր լոյսի խորաններուն մէջ ընդունելով անոնց հոգիները: Խնդրէ նաեւ, որ Աստուած լուսաւորէ քու միտքդ, որպէսզի քալես իր Միածինին Խաչով բացուած ճամբայէն, որ կեանքէն կեանք առաջնորդող ճշմարիտ ճամբան է: Եւ փառք տուր Աստուծոյ, որ որպէս Հայ Քրիստոնեայ՝ մայրական արգանդէն քեզի այս կեանքին հրաւիրելէ ետք, մահուամբ՝ երկրի արգանդէն քեզ ճշմարիտ եւ յաւիտեանական կեանքին պիտի առաջնորդէ:

ՀՈԳԵՒՈՐ ՊՍՏԳԱՍ

Քու բոլոր ճամբաներուդ մէջ Տէրը ճանաչիր: Առաջ 3.6

Ահա նոր տարի մը ու նոր ճամբայ մը, մութ ու անծանօթ, բեռնաւոր անակրնկալներով՝ ուրախ ու տրտում: Դժուարութիւններով ու յաջողութիւններով, վտանգներով ու խրթին հարցերով: Սակայն մի՛ վախնար երբեք: Կանգ ա՛ռ պահ մը ու տես, թէ քու ապահովութեանդ համար ո՞վ է որ քեզի հետ կը թեւակորսէ այս նոր ճամբուն մէջ: Անիկա քու Տէրդ է, լաւ ճանչցիր զինք: Ան քու Արարիչդ է եւ քու Փրկիչդ, ամենակարող ու ամենագէտ: Քեզի համար միշտ ու միայն բարին կամեցող, որուն շնորհքը կը բաւէ քեզի ամէն պարագայի համար:

Ահա մեծ խոստում մը այս Նոր Տարուան համար. «Տէրը քու առջեւ պիտի երթայ ու Իսրայէլի Աստուածը քեզի թիկնապահ պիտի ըլլայ» (Ես. 52:12): Ո՛հ, ի՛նչ անիմանալի պատիւ է, որ թագաւորաց թագաւորը յօժարած է եւ իր մեծափառութեամբ զիջած է անձամբ քու առջեւ երթալ եւ քու թիկունքիդ՝ քեզի թիկնապահ կենայ: Ինչո՞ւ, ի՛նչպէս: Ահա գաղտնիք մը մեծ եւ սքանչելի: Մի՛ վախնար, քեզի չարիք պիտի չի հասնի ու քու բնակարանիդ հարուած մը պիտի չի մօտենայ, որքան ատեն՝ որ Ան քեզի իբրեւ պահապան կը կենայ:

Ճանչցիր զԱյն: Ճամբաղ մո՞ւթ է, սակայն ինչ փոյթ, կեանքի Արեւը քեզի հետ է: Անիկա քու աջ ձեռքիդ քով քու հովանիդ է, քու աջ ձեռքիդ կը բռնէ: Անոր հետ քայլողը բնաւ խաւարի մէջ պիտի չի մնայ:

Ուստի չի վայելեր, քեզի, որ այսօր տրտում սկսիս ճամբաղ: Ան գիտէ թէ ի՞նչու կը հրամայէ քեզի բոլոր սրտով ուրախ եւ գուարթ ըլլալ (Սով. 3:14) եւ բանի մը համար հոգ չընել (Փիլ. 4:6): Քանի որ ինք՝ բոլոր շնորհաց Աստուածը եւ բարեաց Աղբիւրը, քեզի հետ կը քայլ միշտ: Միայն թէ ճամբուղ ընթացքին «Անկէ զգուշացիր ու Անոր խօսքը մտիկ ըրէ՛, Անոր անհնազանդ մի՛ ըլլար (Ելից 23:20-21): Ահա այսպիսով պիտի ճանչնաս զԱյն եւ Անոր քաղցր ըլլալուն համար հետզհետէ աւելի պիտի առնես:

ԵՅԵ ԿԱՍ, ԵՐԲ Կ՛ՈՒԶԵՍ...

ԵՐԲ ՀԻՄՆՂՈՒԹԵԱՆՂ ԲԺՇԿՈՒԹԻՒՆ Կ՛ՈՒԶԵՍ ՀԱՅՅԵԼ, ԿԱՐԳԱ՛ Սաղմոս 6

ՏԷՐ, գայրոյթիդ մէջ մի՛ յանդիմաներ զիս, բարկութեանդ մէջ մի՛ պատժեր զիս:

Ողորմէ՛ ինձի ՏԷՐ, տկար եմ ես: Բժշկէ՛ զիս, որովհետեւ մի՞նչեւ ոսկորներս կը դողան:

Հոգիս ծանր խռովքի մէջ է: Մի՞նչեւ ե՞րբ, ՏԷՐ:

Դարձի՛ր, ՏԷՐ, եւ փրկէ՛ զիս: Ազատէ՛ զիս մահուանէն, որովհետեւ ողորմած ես:

Որովհետեւ մահուան մէջ ո՞վ պիտի յիշէ քեզ, անդրաշխարհին մէջ ո՞վ շնորհակալութիւն պիտի յայտնէ քեզի:

Հեծեծելէն յոգնեցայ, ամէն գիշեր ես լացով լուացի իմ մահինս եւ իմ արցունքներովս թրջեցի անկողինս:

Աչքս մաշեցաւ ողբալէն, տկարացաւ նեղութիւններս:

Հեռացէ՛ք ինձմէ դուք բոլորդ, որ անիրաւութիւն կը գործէք, որովհետեւ ՏԷՐԸ լսեց իմ աղօթքս եւ խնդրանքս ընդունեց:

Թող ամչնան ու սարսափի մատնուին բոլոր թշնամիներս, ամօթով մնան եւ իսկոյն հեռանան:

ՈՍԿԵՂԵՆ ՀԱՄԱՐ

Փոխանակ կորուստական ուտելիք փնտռելու, ջանացէք ապահովել այն կերակուրը, որ յաւիտեանական կեանքի մէջ կը մնայ:

(Յովհաննէս 6:35)